ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<20>> ապրիլի 2015թ. N 37

ք. Եղեգնաձոր,

<<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ>>, <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ>>, <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ>> ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ 728 հրամանագրի 1.6 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 05.12.2013թ. N 1354-Ն հրամանով հաստատված <<Տարվա լավագույն ուսուցիչ>> մրցույթի կարգի 11-րդ կետի, <<Տարվա լավագույն տնօրեն>> մրցույթի կարգի 7-րդ կետի և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթի կարգի 12-րդ կետի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների մարզային գնահատող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյանին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի

<<20>> մայիսի 2015թ. N 37 որոշման

<<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների մարզային գնահատող հանձնաժողովի կազմը

1. Ղազարյան Արփիար – հանձնաժողովի նախագահ, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,
2. Հակոբյան Թարո –անդամ, Վայքի ավագ դպրոցի տնօրեն, ՀՀ ԿԳ նախարարության ներկայացուցիչ,
3. Գասպարյան Ժիրայր–անդամ, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ,
4. Բարսեղյան Հայկուհի – անդամ, Կրթության ազգային ինստիտուտի Վայոց ձորի մասնաճյուղի տնօրեն,
5. Մարկոսյան Լիլիթ – անդամ, Կրթության ազգային ինստիտուտի Վայոց ձորի մասնաճյուղի մասնագետ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Կ. Սահակյան